

ՀԶՈՐ ՊԵՅԹՈՒՄ ԱԹԷՆՔԻ ԶԲՕՍԱՇՐՋԱՅԻՆ ԿԵԴՐՈՒՆ ԿԵԶ,
ԱՌՆՈՒԱԶՆ ԵՐԿՈՒ ՄԱՐԴ ԶՈՀՈՒՄԵ Է

Յունաստանի մայրաքաղաք Աթենքի կեդրոնին մեջ՝ Աքրոփոլիսի հարեանտու- թեամբ գտնուող Փլաքա զբոսաշրջային թաղամասին մեջ, հզոր պայթյունի մեջ մը փլուզուած է: Աննուազն երկու մարդ զոհուած է, երեքը՝ վիրաւորուած: Զանի մը մարդիկ, որոնց շարքին օտարերկրեայ զբօսաշրջիկներ, անհետ կորսուած կը նկատուին: Փրկարարները փառակներէն դուրս բերած են երիտասարդ կնոջ եւ տղամարդու մարմինները: Յունական լրատուամիջոցներու հաղորդումով՝ զոհուած կինը ամերիկացի զբօսաշրջիկ էր, որ շէնքին մէջ կը հանգստանար ամուսինին եւ ես մէկ զոյգի հետ: Իրաւապահները կ'ենթադրեն, որ պայթումին պատճառը կազմ արտահոսքն է, սակայն վերջնական եզրակացութիւն տակա- լին չկայ:

ԽՐԱԳՐԱԿԱՆ

44-ՕՐԵԱՅԻՆ 6-ԲԳ- ՏԱՐԵԼԻՅԸ ԵՒ ՕՐՈՒՄՆ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԸ

44-օրեայ պատերազմի 6-րդ տարեկիցի նշումը շատ ծանր զգացողութիւններ կը յառաջացնէ, պատերազմի առթած արիւնհորքին, անոր հետեանքներուն, զոհե- րուն եւ յատկապէս հայրենիքի մէկ կարեւոր հատուա- ծին, մեր երկրորդ հանրապետութեան կորուստին առումներով:

Անկախ ներկայացուող կամ ներկայացուելիք զենու- ցումներէ եւ եզրակացութիւններէն, փաստեր պէտք է արձանագրել եւ փորձել պարզել այն հանգամանքները, որոնք հասցուցին այս արդիւնքին:

2018-ին պետութեան ղեկը ստանձնած ուժի ներկա- յացուցիչները տակաւ առ տակաւ փոխեցին մինչ այդ հաստատուած քաղաքական վարքագիծը, Արցախի նկատմամբ վարուած բանակցային քաղաքականութիւ- նը, վերաբերումը՝ Արցախի Յանրապետութեան նկատ- մամբ: Այս ընդհանուր ուղեգիծին վառ ապացոյցներն էին դէպի Արցախ պետական գործուղումներու դադրեցումը, Արցախի փոխարէն Լեւոնային Ղարաբաղ ձեռակերումի օգտագործումը, բանակցութիւնները նախ գերօ կէտ վե- րադարձնելու որոշումը, յայտարարութիւնը առ այն, որ Յայաստանի իշխանութիւնները լիազօրուած չեն Արցա- խի ժողովուրդին կողմէ բանակցութիւններ վարելու:

Այս ընդհանուր ուղեգիծի հետեւողականութեան տրամաբանութենէն դուրս հակասական թուացող «Ար- ցախը Յայաստան է եւ վերջ «յայտարարութիւնը խոր- քին մէջ բանակցային գործընթացէն դուրս գալ էր: Այս յայտարարութիւնը նաեւ ժխտում էր նախկին յայտա- րարութեան, որ Երեւանի իշխանութիւնները լիազօրու- ած չեն յանուն Արցախի ժողովուրդին բանակցելու: Այս յայտարարութիւնը ինքնորոշման այդ իրաւունքի ժղի- տում էր եւ յաշւ միջազգային ընտանիքին Արցախի կցում Յայաստանի Յանրապետութեան: Այսպիսով ամ- բողջովին կը տապալէր բանակցային գործընթացը, եւ Ազրպէյճանին կը հրամցուէր յարձակելու պատրուակի ամբողջական կիմնաւորումներ: Պատերազմի սանձա- զերծման սկզբնական օրերուն, «ինչ ալ ըլլայ պատե- րազմի արդիւնքը մենք պէտք է մենք մեզ յաղթանակած նկատենք» յայտարարութիւնը եւս տարակուսելի մտադրութիւններու մասին հարցականներ կը տեղծէր:

Այնուհետեւ պատահեցաւ այն, ինչ որ պատահեցաւ: Շրջափակում, կանխամտածուած սովամահութիւն, անցարգելներու վրայ առեւանգումներ, յարձակում, գե- րեվարումներ, ամբողջական հայաթափում, պարտադըր- ւած լուծարում հանրապետութեան: Դիմա, մշակութա- յին ցեղասպանութիւն, հայկական հետքերու ջնջում, պատմութեան նենգափոխում, հայկական քաղաքակըր- թութեան աղուանցում: Նոր նախապայմաններ, Սահ- մանադրութիւն փոխելու, պարտադրանք-ընդառաջում՝ ռազմական յանցագործութիւններու դէմ բացուած դա- տական հայցերու լետս կոչում, «Չանգեզուրեան մի- ջանցը»-ի ծրագրի փայփայում եւ անվերջ յիշեցում:

44-օրեայի 6-րդ տարեկիցը սակայն, զոհերու յիշա- տակի լիարժէք յարգումի եւ անոնց թողած կտակը իրա- կանացնելու եւ մասնաւոր տապալածը վերակերտելու համար, քանի մը ուղերձ կը պարփակէ:

- Ամբողջական գնահատում կատարել աշխարհաքա- ղաքական-տարածաշրջանային անվտանգութեան հա- մակարգի վերափոխման հանգամանքներուն եւ նոր ճարտարապետութեան կառուցման նախադրեալներուն,

- Համահայկական օրակարգի ձեւաւորում, խորապէս գիտակցելով, որ Երեւանի այսօրուան վարիչները ոչ միայն կը շրջանցեն, այլ նաեւ կը հակադրուին անոնց,

- Արցախի ժողովուրդի իրաւունքներու վերականգ- նում եւ ասոր իբրեւ առաջին ենթաօրակարգ՝ հաւաքա- կան վերադարձի իրաւունքի իրացում, միջազգային երաշխաւորութեամբ:

- Ազրպէյճանի ռազմական յանցագործութիւններու, անոր իրականացուցած ցեղային զտումի բազմաթիւ փաստագրումներու դատականացում միջազգային քրեական ատենաներու մօտ,

- Հոգեւոր-մշակութային ժառանգութեան պահպան- ման համար միջազգային կառոյցներու մօտ իրաւական աշխատանքներ՝ Ազրպէյճանը ներկայացնելով իբրեւ քաղաքակրթութիւն բնաջնջող պետութիւն,

- Պաքուի մէջ պահուող Արցախի ռազմաքաղաքա- կան ղեկավարութեան, ռազմագերիներու եւ պահուող անձերու ազատ արձակումի նպատակով տարբեր պե- տութիւններու մօտ Ազրպէյճանի նկատմամբ ճնշումի քաղաքականութիւն ապահովող համատարած աշխա- տանքներու զարգացում,

- Արցախի պետական հաստատութիւններու զօրակ- ցութիւն՝ նպատակ ունենալով ինքնորոշուած Արցախի ժողովուրդին կողմէ ընտրուած պետութեան հաստա- տութիւններու ներկայացուցիչներու օրինականութեան պահպանումը,

- Հայաստանի Յանրապետութեան տարածքին հաս- տատուած Արցախի բռնատեղահանութեւ ժողովուրդի բազմապիսի օժանդակութիւններու կազմակերպում:

Աշխատանքային այս ծրագիրը ունի անշուշտ իր ածանցեալ կետերը: Բոլորը՝ յօգուտ Արցախի ժողովուրդի ամբողջական իրաւունքներու լիակատար վերականգնու- մին ծառայող: Միայն այդ ձեռով շրջած կ'ըլլանք մեր վրայ պարտադրուած ճակատագրորոշ խաղի կանոնները:

Խորհրդային-ազրպէյճանական բռնակցումի որոշու- մէն 70 տարի ետք, Արցախը վերադարձաւ հայութեան: Դիմա, իրադրանքութիւնները արագ է եւ նախապէս եր- կարատեւ ժամանակ ենթադրող իրականացումները կրնան շատ աւելի կարճաժամկետ սահմաններու մէջ առարկայանալ: Արցախի վերադարձը եւս, ներկայ արագակշռող գործընթացներուն մէջ: Աշխարհաքա- ղաքականութիւնը կայուն չէ եւ ներկայ օրինաչափու- թիւններով յարափոփոխ, արագօրէն: Դրամայականը՝ մեր պատրաստ ըլլալն է:

ԹՐԱՄՓ ՄԵՐԺԱՇ Է ՀՈՐՄՈՒՁԻ ՆԵՂՈՒՅԸ ՎԵՐԱԲԱՆԱԼՈՒ ԻՐԱՆԻ ԱՌԱՋԱՐԿԸ

Միացեալ Նահանգներու նախա- գահ Տանըլտ Թրամփ մերժած է Դոր- մուզի նեղուցը վերաբանալու Իրանի առաջարկը՝ գայն անընդունելի նկա- տելով:

Մէկ օր առաջ Իրանի արտաքին գործոց նախարար Ապաս Արաղչի յայտարարած էր, որ Թեհրան Ուա- շինկընթին «յստակ» ծրագիր ներկա- յացուցած է, որով անհրաժեշտ պայ- մաններուն կատարման պարագային նեղուցը կրնար վերաբացուիլ եօթը օրուան ընթացքին:

«Ես կը մերժեմ անոնց գործարքը: Անոնք կ'ուզեն, որ նեղուցը անմիջա- պէս բանան, որովհետեւ շատ վատ վի- ճակի մէջ են», լրագրողներուն ընած է Թրամփ՝ աւելցնելով, որ առաջարկուող չէն:



պայմանները իր համար ընդունելի չեն:

Շար.ը՝ էջ 8

ՓԱՐԻՉԻ ՄԷՋ ԱՒԵԼԻ ՔԱՆ
600 ՀԱՋԱՐ ՄԱՐԴ ՄԱՍՆԱԿՅԵՑԱԻ
ՀՈՈՄԻ ՊԱՊԻ ՊԱՏԱՐԱԳԻՆ



Փարիզի կեդրոնին մէջ երէկ Դոմի պապ Լեոնի ԺԴ. պապին մասնակցու- թեամբ մեծ բացօթեայ պատարագ տե- ղի ունեցաւ: Զոնքորտի հրապարակին մէջ տեղի ունեցած արարողութեան աւելի քան 600 հազար մարդ մասնակ- ցեցաւ:

Մարդիկ արդէն ժամեր առաջ սկը- սան հաւաքուիլ Էլիսէի դաշտերու յա-

րակից հատուածներուն: Ֆրանսայի նախագահ Էմանուէլ Մաքրոն պատարագին չմասնակցե- ցաւ: Ներկաներու շարքին եղան նախ- կին նախագահ Նիքոլա Սարքոզի, Մա- ռին Լը Փեն եւ նախկին վարչապետ Էտուար Ֆիլիպ:

Լեոն ԺԴ. պապը Ֆրանսայի մէջ կը գտնուէր քառօրեայ այցելութեամբ:

ՇԵՇՏԵԼՈՎ, ՈՐ ՀԱՐԱԻ ԴԵՍ
ԽՐԱՅԵԼ ՅԵՂԱՍՊԱՆՈՒԹԻՆ ԿԸ ԳՈՐԾԷ

«ՕՍՄԱՆԵԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԻՒՆԸ
ՎԵՐԱԿԵՆԴԱՆԱՅՆԵԼՈՒ ԵՒ ՇՐՋԱՆԻՆ
ՏԻՐԵԼՈՒ ԾՐԱԳԻՐ ԿԱՅ ԹՐՔԱԿԱՆ ԵՒ
ԻՍՐԱՅԷԼԵԱՆ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԲ»

ԸՆԴԳԾԵՑ ԵՐԵՍՓՈԽԱՆ ՅԱԿՈԲ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ

ՀՀԴ Բիւրոյի անդամ, Միջին Արեւելքի պատաս- խանատու եւ Հայկական երեսփոխանական պլոքի ներկայացուցիչ Յակոբ Բագրատունի շաբաթա- վերջին հարցազրոյց մը ունեցաւ լիբանանեան «ԷՆ.Պի.ԷՆ.» պատկերաս- փիւռի կայանին հետ: Չրոյցը հիմնականին մէջ կեդրոնացաւ շրջանին մէջ շարունակուող ապա- հովական անկայունու- թեան եւ Լիբանանի ներքին իրավիճա- կին վրայ:

«Չեմ ուզեր յոռետեսութեամբ սկսիլ զրոյցս, բայց կրնայ ըլլայ, որ Լիբանա- նի ներքին քաղաքական կեանքին մէջ որոշ տարակարծութիւններ կային վարչակարգի թէ իշխանութեան գծով, սակայն ներկայիս հիմնական տարա- կարծութիւնը քաղաքացիութեան տազնապէս է», ըսաւ երեսփոխան Յա- կոբ Բագրատունի՝ նշելով, որ Լիբա- նանի մէջ ներկայիս համայնքային պատկանելիութիւնը կը գերազանցէ հայրենասիրութեան: Վկայակոչելով լիբանանցի կարգ մը մտաւորականնե-

րու եւ քաղաքագետներու կեցուածքնե- րը, ինչպէս՝ Էմիլ Էտտէ, Պշարա Խուրի, Սամի Սոլի, Ռիատ Սոլի, Զամիլ Շա- մուն հասնելով մինչեւ վերջերս Ուկրա- ժինայի յուշագրութիւնները, Բագ- րատունի նշեց, որ կարելի չէրաւ իրա- կանացնել լիբանանցիներու երա- զանքները: Մեծն Լիբանան եւ անկա- խութիւն կերտեցինք, սակայն ներկա- յիս 10.452 քառ. քմ տարածութեան մէջ նոյնքան տարակարծութիւններ կան: Տազնապէս լիբանանեան հայրե- նիքին նկատմամբ քաղաքացիական պատկանելիութեան չգոյութիւնն է:

Շար.ը՝ էջ 8

6 ՏԱՐԻ ԱՌԱՋ՝ 27 ՍԵՊՏԵՄԲԵՐԻՆ,
ԱԶՐՊԵՅՃԱՆԻ ՇՂԹԱՅԱԶԵՐԾԱՇ
ՊԱՏԵՐԱԶՄԸ ԱՌԱՋԻՆ
ՔԱՅԼԸ ԵՂԱԻ ԱՐՅԱՆԻ
ԴԱԺԱՆ ՃԱԿԱՏԱԳԻՐԻ ՄԿԻԶԵՐԻՆ



Սեպտեմբեր 27-ը Հայոց Նորագոյն պատմութեան մէջ ճակատագրական թուական մը դարձաւ, որով- հետեւ 6 տարի առաջ՝ 2020-ի այդ օրը Ազրպէյճան՝ Թուրքիոյ բացայայտ աջակցութեամբ եւ վարձկան- ահաբեկիչներու մասնակցութեամբ, Արցախի հետ չփման գիծի ամբողջ երկայնքով լայնածաւալ պա- տերազմ շղթայագերծեց:

Պատերազմը տեւեց 44 օր եւ աւարտեցաւ Նոյն թուականի Նոյեմբեր 9-ին՝ Հայաստանի, Ազրպէյճա- նի եւ Ռուսիոյ կողմէ եռակողմ յայտարարութեան ստորագրութեամբ: Այդ յայտարարութեամբ սկսաւ Հայաստանի իշխանութիւններուն յանձնուողական քաղաքականութիւնը, որուն առաջին քայլը եղաւ Ազրպէյճանի վերահսկողութեան յանձնել Արցախի 7 շրջանները, Շուշին ու Հադրութը:

Ըստ Հայաստանի քննչական կոմիտէին, 2020 թուականի 44-օրեայ պատերազմին նահատակուե- ցան 3833 անձեր, որոնցմէ 3755-ը՝ զինուորներ, 78-ը քաղաքացիներ: Անյայտ կը մնայ 191 անձերու ճա- կատագիրը, որոնցմէ 172-ը՝ զինուորներ, 19-ը՝ քա- ղաքացիներ:

Սեպտեմբեր 27-ը մեր ժողովուրդի յիշողութեան մէջ մնաց իբրեւ ազգային մեծ ողբերգութեան, բայց միաժամանակ մեր հերոս նահատակներու անսահ- ման Նուիրումի եւ սիրանքի յիշատակի օր:

ԱՐՅԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ

«ԱՐՅԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՀԻՄՆԱՐԱՐ
ԻՐԱՌՈՒՔՆԵՐԻ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ
ՊԵՏՔ Է ԼԻՆԻ
ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ՀԻՄՔՈՒՄ»

Արցախի Յանրա- պետութեան Ազգային ժողովի նախագահի պարտականութիւննե- րը կատարող Գագիկ Բաղուցի հետեւեալ ու- ղերձը յոյց 2020 թը- ւականի սեպտեմբեր 27-ի պատերազմի 6-րդ տարեկիցին առի- թով.

Շար.ը՝ էջ 2



«ԹՐԱՄՓԻ ՈՒՂԻ»-ԻՆ ՄԷՋ
ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐՈՒ ԴԻՄԱՅ
ՄԱՍՆԱԲԱԺԻՆԻ ՓՈԽԱՆՑՈՒՄ
ՆԱԽԱՏԵՍՈՒՄԸ ԶԷ



Հայաստանի հարաւով անցնող հայ-ամերիկեան «Թրամփի ուղի» նախագիծին մէջ ներդրումներու դի- մաց մասնաբաժնի փոխանցման ձեւաչափ նախա- տեսուած չէ, եւ չի նախատեսուիր նման բան: Այս մասին «Ազատութիւն» ծայնասփիւռի կայանի հար- ցումին ի պատասխան յայտնեց Հայաստանի արտա- քին գործոց եւ միջազգային առեւտուրի նախարա- րութիւնը:

Շար.ը՝ էջ 2

ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՐ ԿԱՆԳՈՒՆ՝ 109 ՍԿԱՌԻՏՆԵՐՈՒ ԱՆՄՈՌԱՆԱԼԻ ՃԱՆԱՊԱՐՀԸ «ԱՐԱՐԱՏԻ ՀԱՄԱՐ ԿԱՆԳՈՒՆ» ԽՈՐԱԳԻՐՈՎ



Համա-ՅՄԸՄ-ական 13-րդ բանակումը ՅՄԸՄ-ի մեծ ընտանիքին համար դարձաւ բացառիկ փորձառութիւն մը, որուն ընթացքին սկաուտական կէտնքը միացաւ հայրենի հողին վրայ հայ երիտասարդներու ապրած խանդավառութեան եւ աշխարհի տարբեր անկիւններէ Հայաստանի մէջ համախմբուած ՅՄԸՄ-ականներու հարազատութեան:

Այս մեծ բանակումին իր արժանավայել եւ աշխուժ մասնակցութիւնը բերաւ ՅՄԸՄ-ի Լիբանանի ընտանիքը՝ 109 հոգի հոգ պատուիրակութեամբ, որուն մաս կը կազմէին Պէյրութի, Անթիլիասի, Պուրճ Համուտի, Այնճարի եւ Ժոյնտի մասնաճիւղերու սկաուտները:

Պատուիրակութիւնը կը գլխաւորէին Լիբանանի Շրջանային ընդհանուր խմբապետ Թալիս Ակապաշեան-Փափիդեան եւ փոխխմբապետ, ՅՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային խմբապետ Սաֆօ Եագուպեան:

ԲԱՆԱԿՈՒՄԸ ՍԿԱՍՒ ԴԱՅԱՍՏԱՆ ՀԱՍՆԵԼ ԵՍ ԱՌԱՅ ԻՍԿ

Լիբանանի պատուիրակութեան համար բանակումը սկսաւ Հայաստան մեկնելու նախորդող աշխատանքներով՝ երկու նախապատրաստական միօրեայ սեմինարներ, որոնք միայն տեղեկատուական բնոյթ չունէին, այլ դարձան համախմբման, մօտեն ծանօթացման եւ բանակումին ոգին ապրելու առաջին քայլերը:

Առաջին սեմինարի ընթացքին մասնակիցները մանրամասնօրէն ծանօթացան՝ բանակումի ծրագիրին, աշխատանքներուն, օրէնքներուն, տեղի ունենալիք պոյնտներուն, խաղերուն:

Կազմուեցան խումբերը եւ խմբակներ, յանձնախումբեր՝ քարոզչականի, մշակոյթի օրուան, զարգացման մրցումի, ձեռնային աշխատանքներուն եւ խարուկահանդէսի համար: Այս սեմինարին մասնակիցները առիթը ունեցան Համա-ՅՄԸՄ-ական բանակումի մասնակցութիւն բերած խմբապետներու փորձառութիւնները լսելու եւ հարցումներ ուղղելու. առաջին սեմինարին ետք տեղի ունեցան բազմաթիւ կազմակերպչական եւ գումակային աշխատանքներ՝ անդամները միասնաբար հաւաքուեցան ու պատրաստեցին գոյքերը, ստուգեցին վրանները եւ կատարեցին անհրաժեշտ դասաւորումները:

Յանձնախումբերը ունեցան իրենց հերթական ժողովները, ծրագրեցին ու պատրաստեցին ձեռնային յատակագիծը, խարուկահանդէսին եւ մշակոյթի օրուան մանրամասնութիւնները, իսկ երկրորդ սեմինարին դարձեալ բոլորը միատեղ կատարեցին՝ փորձերը, մրցումներ, ներկայացումներ եւ խարուկահանդէսի փորձեր:



Այս նախապատրաստական շրջանը իր կարեւոր դերը ունեցաւ, որովհետեւ 109 մասնակիցներ Հայաստան չմեկնեցան միայն իբրեւ առանձին սկաուտներ, այլ՝ իբրեւ մէկ ամբողջական եւ միասնական պատուիրակութիւն:

Եւ վերջապէս հասաւ մեկնումի օրը: Լիբանանի պատուիրակութեան անդամները հաւաքուեցան «Շաղգոյեան» կեդրոն՝ իրենց գոյքերով, վրաններով, պայուսակներով եւ ամենէն կարելորդ՝ մեծ ոգէտրութեամբ:

Այս պահը սովորական ճամբորդութեան պահու չէր նմաներ. անոնք գիտէին, որ կը մեկնին Հայաստան՝ մասնակցելու Համա-ՅՄԸՄ-ական բանակումի մը, հանդիպելու աշխարհի տարբեր երկիրներէ եկած իրենց ընկերներուն եւ եղբայրներուն, քանի մը օր ապրելու այնպիսի փորձառութիւն մը, որ երկար պիտի մնայ իրենց յիշողութեան մէջ: Կը մտածէին այդ պահուն, որ պիտի հասնէին Բիւրական՝ «Գառնիկ Սկրտիչեան» բանակավայր եւ ի՞նչ պիտի տեսնէին...

«Շաղգոյեան» կեդրոնէն մինչեւ օդակայան ՅՄԸՄ-ի Լիբանանի Շրջանային վարչութեան եւ Սկաուտական խորհուրդի անդամներ ընկերակցեցան մասնակիցներուն:

Ուղին լեցուն էր խանդավառութեամբ, երգերով ու ժպիտներով: Իւրաքանչիւրին մտքին մէջ նոյն հարցումն էր՝ ի՞նչ պիտի ընենք Հայաստան, ո՞ր պիտի երթանք...

ՀԱՅԱՍՏԱՆ ԺԱՄԱՆՈՒՄ

Երբ հասան «Չուրթնոց», արդէն բոլորին աչքերուն մէջ շատ յստակ էր, որ նոր էջ մը պիտի սկսի, հոն արդէն երազը դէպի իրականութիւն կ'ընթանար, եւ մթնոլորտը փոխուեցաւ կանչերով ու երգերով, անոնք աւելի ուժեղացան, բոլորին համար Հայաստանը այլեւս հեռուն երեւոյղ հայրենիք մը չէր, այլ՝ իրականութիւն, հայրենի հողին վրայ ուրախութիւն հպարտութիւն, յուզում, խանդավառութիւն եւ հետաքրքրութիւն միացան իրարու:

Շատերու համար առաջին այցելութիւնն էր ասիկա, անոնց առաջին տպավորութիւնը եղաւ այն, որ հոն ամեն մարդ հայ է, հայերէն կը խօսի, ամեն տեղ հայերէն գրուած է: Շատերու համար խոր զգացում ստեղծուեցաւ՝ «Մենք տուն եկանք»-ի, անոնք հայրենի հողին վրայ էին իրենց ՅՄԸՄ-ականի տարագով, փողովապով եւ դրօշով:

ՀԱՐԱՇԱՏ ԵՒ ԱՆՏՈՈՒՄՆԵՐԻ ԲԱՆԱԿՈՒՄ

Բիւրականի մէջ ՅՄԸՄ-ի «Գառնիկ Սկրտիչեան» բանակավայրը դարձաւ այն վայրը, ուր տարբեր երկիրներէ եկած սկաուտներ



միացան մէկ մեծ ընտանիքի՝ մէկ մեծ դրօշակի տակ, եւ «Արարատի համար կանգուն» նշանաբանը աստիճանաբար դարձաւ ոչ միայն բանակումին խորագիրը, այլ նաեւ՝ ամեն մէկ մասնակցի ապրած զգացումը:

Աշխարհի տարբեր ծագերէ հայրենի հողին վրայ համախմբուած միութեանականները եռանդով դիմաւորեցին զիրար եւ անցան աշխատանքի՝ բանակավայրը պատրաստեցին երգերով ու բարձր տրամադրութեամբ:

Բանակումի օրերը անցան խիտ, ճիշտ եւ բազմազան ծրագիրներով: Ծանօթացումը, աշխատանքները եւ խաղերը մասնակիցներուն օգնեցին՝ արագ կապեր հաստատելու եւ իրարու հետ մտերմանալու, զբօսնելու եւ միասին յիշատակելի ժամեր անցընելու:



Տարբեր երկիրներէ ժամանած սկաուտները, որոնք առաջին օրը անծանօթ էին, քանի մը օր ետք դարձան...

Comps Olympics-ը, **Ռեյի** մրցումը, զարգացման մրցումը եւ «Կինես» մրցանիշի նախաձեռնութիւնները բանակումին տան մրցակցային, բայց միաժամանակ ընկերական եւ ուրախ մթնոլորտ:

Համաշխարհային սկաուտութեան աշխարհի մեծագոյն շուշանաձաղիկը Բիւրականի մէջ 809 մասնակիցներով կազմելով եւ համաշխարհային մրցանիշներու «Կինես» գիրք մուտք գործելը իւրաքանչիւր սկաուտի արժանապատու-



թիւնն էր, ումն էր, կամքն էր, շուշանաձաղիկին սահմաններուն մէջ կանգնելով՝ ամեն մէկ սկաուտի սրտի զարկը կը լսւէր, երախտագիտութիւն եւ հպարտութիւն, պարծանք ու յարգանք կային անոնց մտքին ու հոգիին մէջ:

Մրցանակի յայտարարութեան պահուն «Գառնիկ Սկրտիչեան» բանակավայրը թնդաց 940 սկաուտներու ցնծութեան ձայներով: Տօնական մեծ օր էր ՅՄԸՄ-ի ընտանիքին համար:

Բանակումը միայն խաղ եւ մրցակցութիւն չէր, այլ առիթ էր նաեւ հայրենիքը ճանչնալու եւ ապրելու բացառիկ պահեր, այցելութիւններ կազմակերպութեան ղեպի Հայաստանի տարբեր



վայրեր, ինչպէս՝ Գիւմրի, իսկ «Միթի հանթ»-ի միջոցով մասնակիցները աւելի հետաքրքրական ձեւով ծանօթացան քաղաքին:

Այցելութիւններէն տպաւորիչ էր Էջմիածինը, ուր մեծ ուրախութեամբ մեզ ընդունեց Ամենայն Հայոց կաթողիկոսը եւ յղեց իր պատգամը՝ հաւատարիմ մնալու մեր ազգին եւ հայրենիքին:

Այցելեցինք նաեւ Օհանավանք, Սաղմոսավանք եւ Տառնու պուրակ: Տպաւորիչ էր Եռաբլուր տրուած այցելութիւնը, երբ ՅՄԸՄ-ականները իրենց յարգանքի տուրքը մատուցեցին Նահատակներու շիրիմներուն առջեւ խոնարհելով: Նաեւ կարեւորութիւն տրուեցաւ Երեսնի մէջ շրջելու, վայելելու հայրենիքը: Յատկանշական էր բոլոր սկաուտներուն ընդհանուր տողանցքը՝ Մատենադարանէն ղեպի օփերայի հրապարակ, ուր սկաուտները հաստատ եւ հպարտ քայլերով տողանցեցին:



Իսկ Արագած լեռ բարձրանալը դարձաւ յատուկ փորձառութիւն մը, բարձրանալը միայն ֆիզիքական ուժի փորձարկում չէր, այլ սկաուտները ամեն մէկ դժուար քայլի մէջ կը զգային ուժ, զօրութիւն, կամք եւ նպատակ: Անոնք չմտածեցին յոգնութեան կամ դժուարութեան մասին, այլ վճռած էին հասնիլ զագաթ եւ այդ մէկը ընելու համար իրենց բոլոր կարելիութիւնները ի գործ դրին:

Լիբանանի պատուիրակութիւնը իր յատուկ դերը ունեցաւ տաղաւարներու ներկայացման օրը, երբ Լիբանանի ՅՄԸՄ-ականները մեծ խանդավառութեամբ, երգով, պարով, զարդարանքներով ներկայացուցին իրենց ապրած երկրի մշակութային ինքնութիւնը, լիբանանեան ուտեստեղէնները ճոխացուցին կրպակը, ծանօթացուցին լիբանանեան տարազները, երգերը, պարերը, ինչպէս նաեւ Լիբանանի պատուիրակութեան խումբ մը տաղանդաւոր եղբայրներ իրենց երաժշտական գործիքներով ճոխացուցին մթնոլորտը՝ շրջելով եւ այցելելով բոլոր շնորհաներու կրպակները:

Խարուկահանդէսները դարձան անմոռանալի յիշատակներով լեցուն, երբ կրակին շուրջ հաւաքուած սկաուտներ երգեցին, պարեցին, պատմեցին, ծիծաղեցան եւ պահ մը մոռցան հեռաւորութիւնները:

Լիբանանի պատուիրակութիւնը մեծ շուքով եւ խանդավառութեամբ ներկայացուց իր խարուկահանդէսը, որուն կիւթն էր՝ Լիբանանի մէջ ինչպէ՛ս եւ ո՞ր հիմնուեցաւ ՅՄԸՄ-ը, ապա՝ մասնաճիւղերը: Աշխարհի չորս ծագերէն հայրենիքի մէջ, ՅՄԸՄ-ի դրօշին տակ համախմբուած մեծաթիւ ՅՄԸՄ-ականներուն ներկայացուեցաւ լիբանանեան մշակոյթը՝ երգեր-պարեր, **սքէշներ**՝ լիբանանեան մշակոյթին պատկանող: Խարուկահանդէսին իր տեղը ունեցաւ նաեւ հայկական մշակոյթը, ՅՄԸՄ-ի Լիբանանի պատուիրակութեան անդամները խորհրդողանշական կերպով միասնականութեամբ ջաշը վառեցին, դրօշները կազմեցին տարբեր բուրգերով եւ բանակումի նշանաբանով, իսկ ՅՄԸՄ-ի խոստումով փակեցին խարուկահանդէսը:

Այս բոլոր աշխատանքներէն ետք պէտք է յիշենք մեր մրցանակները, որոնք արգասիքն էին հետեւողական, կազմակերպական եւ սկաուտական ոգիով պատրաստուած աշխատանքներուն:

Լիբանանի պատուիրակութիւնը համա-ՅՄԸՄ-ական 13-րդ բանակումը աւարտեց հետեւեալ յաջողութիւններով եւ մրցանակներով.

Չարգացման մրցում՝ առաջին դիրք,
Մշակութային օրուան մրցում՝ առաջին դիրք,



Խարուկահանդէս՝ երկրորդ դիրք,

Ռեյի փէյփըր՝ երկրորդ դիրք.

Ձեռնային աշխատանքի մրցանակ՝ երկրորդ դիրք:

Լիբանանի ՅՄԸՄ-ականները բանակումին ընթացքին չսահմանափակուեցան միայն ընդհանուր ծրագիրին մասնակցելով, այլ Լիբանանի պատասխանատուներն ու սկաուտները իրենց ներդրումը ունեցան խաղերու կազմակերպման, տարբեր աշխատանքներու իրականացման եւ ընդհանրապէս զանազան գործունեութեան օժանդակելու:

Անոնք իրենց աշխուժութեամբ օգնեցին ստեղծելու բարձր տրամադրութիւն եւ համագործակցութեան մթնոլորտ, անդամները իրենց ներկայութիւնը ամենուր զգալի դարձուցին եւ նոր ընկերութիւններ կերտեցին, ինչպէս նաեւ առիթը ունեցան մասնակցելու Լիզպոնի Նուիրուած ձեռնարկին:

Բանակումի ընթացքին Լիբանանի պատասխանատուները իրենց կարեւոր ներդրումը ունեցան տարբեր աշխատանքներու կազմակերպման եւ իրականացման մէջ, անոնք օժանդակեցին խաղերուն եւ աշխատանքներուն: Լիբանանի պատասխանատուներուն համար կարեւոր էր ոչ միայն մեր պատուիրակութեան հետեւիլը, այլեւ՝ ամբողջ բանակումին օգտակար ըլլալը:

Լիբանանի պատուիրակութեան կարեւորագոյն ներդրումներէն մէկը եղաւ խանդավառ մթնոլորտ ստեղծելու կարողութիւնը. ազատ պահերու Լիբանանի սկաուտները իրենց աշխուժութեամբ, ընկերասիրութեամբ եւ բարձր տրամադրութեամբ, որ վարակիչ էր, օգնեցին, որ տարբեր պատուիրակութիւններ շատ արագ ու անմիջական կերպով իրարու մօտենան, իսկ կարեւորագոյն առաքելութիւններէն մէկը եղաւ կամուրջներ կառուցելը. կամուրջ՝ Լիբանանի եւ աշխարհի տարբեր շրջաններու միջեւ:

«Արարատի համար կանգուն» բանակումը Լիբանանի պատուիրակութեան համար չէղաւ պարզապէս սկաուտական գործունեութիւն մը, այլ՝ հայրենիքի հետ հանդիպում, նոր կապերու ստեղծում եւ ՅՄԸՄ-ական ոգիի վերանորոգութիւն:

Մեր սկաուտները Հայաստան մեկնեցան մեծ սպասումով եւ վերադարձան իրենց սրտերուն մէջ Հայաստանէն բաժին մը ամփոփած՝ նոր փորձառութիւններ, նոր ընկերութիւն եւ անմոռանալի յիշատակներ:

Լիբանան միշտ պատրաստ է իր ամբողջական մասնակցութիւնը բերելու եւ իր կարեւոր ներդրումը ունենալու:

ՕՍՄԱՆԵԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԻ ԵՐԿԱԹՈՒՂԻՒՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ ԵՒ ԹՈՒՐԲԻՈՅ ԱՇԽԱՐՀԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՇԱՀԵՐԸ ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԻ ՄԷՋ

Թուրքիոյ աճող հետաքրքրութիւնը՝ օսմանեան դարաշրջանի պատմական Յիժազի երկաթուղին (Կոստանդնուպոլիսը կապելու Յիժազին) վերականգնելու հանդէպ, պայմանաւորուած է աշխարհաքաղաքական, աշխարհատնտեսական եւ ռազմավարական հաշուարկներու հետ: Պատմականօրէն երկաթուղին կը ներկայացնէր կապակցութիւնը Օսմանեան կայսրութեան արեւմտեան նահանգներէն մինչեւ Արաբական թերակղզի՝ Դամասկոսը, Ամմանը եւ Սաւոնեան միացնելով միասնական փոխադրական եւ քաղաքական տարածքի մը ներքեւ: Այսօր Անգարան այս միջանցքով կը հետապնդէ երկու հիմնական նպատակ. Նախ եւ առաջ ան այս ծրագիրը կը դիտէ իբրեւ առիթ մը՝ պատերազմէն ետք Սուրիան վերածելու համար Թուրքիան Յորդանանի, Սեւտական Արաբիոյ եւ Տօցի շուկաներուն կապող տարանցիկ միջանցքի մը. երկրորդ՝ ան կը նպատակադրէ մօտեալ Սեւտական Արաբիոյ՝ սկսելու համար այլընտրանքային միջանցք մը, որ կրնայ փոխարինել Ամերիկայի Միացեալ Նահանգներուն կողմէ նախաձեռնուած եւ Իսրայէլի եւ Արաբական Միացեալ Եմիրութիւններուն կողմէ աջակցութիւն վայելող Յնդկաստան-Միջին Արեւելք-Եւրոպա միջանցքը (IMEC/ՅՄԱԵՄ), որ կը շրջանցէ Թուրքիոյ տարածքը:



Ո՛րք է Լիբանանը աշխարհատնտեսական այս ճակատումին մէջ

Սուրիոյ համար թրքական ծրագիրը կը նշանակէ վերստանալ իր պատմական դերը՝ իբրեւ ցամաքային կամուրջ: Սուրիոյ փոխադրութեան նախարարը ՍԱՆԱ լրատու գործակալութեան յայտնեց, որ 2011-էն առաջ բեռնափոխադրական երկաթուղի մը կը կապէր Թարթուսի նահանգիստը Իրաքի Ում Զար նահանգիստին հետ, Պաղտատի ընդմէջէն: Դամասկոս աշխուժօրէն կը փնտռէ Զամաշխարհային դրամատան օգնութիւնը՝ ֆինանսաւորելու համար ենթակառուցումը այնի եւ կապակցութեան նախագիծեր, որոնց նպատակն է նպաստել վերականգնելու իր երկաթուղիները, որոնք ժամանակին կապուած էին իր նահանգիստներուն հետ: Զաղաքականօրէն թրքական-սեւտական համաձայնութիւնը կրնայ նուազեցնել Եմիրաթական ազդեցութիւնը Դամասկոսի վրայ:

Լիբանանին եւ Կիպրոսի միջեւ ծովային համաձայնագիրին ստորագրութիւնը դիւանագիտական լաւութեան յառաջացուց Պէյրութի եւ Անգարայի միջեւ: Այս մտահոգութիւնը վերջերս փոխանցուեցաւ լիբանանցի պաշտօնեաներուն՝ թրքական պաշտօնեաներու հետ բարձր մակարդակի հանդիպումներու ընթացքին: Զետաքրքրական է, որ Լիբանան, ՅՄԱԵՄ-ին միանալու հանդէպ իր հետաքրքրութիւնը յայտնելէ ետք, անակնկալօրէն մաս դարձած է թրքական-սեւտական ծրագիրին՝ Թրիփոլիի նահանգիստին հետ կապուած ծրագիրներով եւ Թրիփոլիի Սուրիոյ սահմանին կապող երկաթուղիի վերականգնումի նախագիծին միջոցով: Լիբանանեան իշխանութիւնները վերջերս սկսան երկաթուղիի վերականգնման նախաձեռնութեան առաջին փուլին, որուն նպատակն է Թրիփոլիի կապել աւելի լայն շրջանային փոխադրական ցանցերու հետ, որոնք կ'երկարին դէպի Սուրիա, Թուրքիա, Յորդանան եւ Սեւտական Արաբիա (որ հաւանաբար նախագիծին զուխաւոր ֆինանսաւորողը պիտի ըլլայ): Անկախ նշանակալիօրէն կ'աւելցնէ Թուրքիոյ հետաքրքրութիւնը հիւսիսային Լիբանանի նկատմամբ, քանի որ Թրիփոլին կրնայ վերածուի Միջերկրականի գումակային կենդրոնի մը: Անգարան երկար ժամանակէ ի վեր կը մշակէ տնտեսական, մշակութային եւ քաղաքական ազդեցութեան ծրագիրներ հիւսիսային Լիբանանի, մասնաւորաբար Թրիփոլիի մէջ, եւ երկաթուղիի կապակցութեան վերականգնումը կրնայ քաղաքը ներառել աւելի լայն, թրքական աջակցութեամբ շրջանային տնտեսական նախագիծի մը մէջ: Լիբանանի համար ահկա կրնայ տնտեսական առիթներ ստեղծել՝ տարանցիկ առեւտուրի, նահանգիստի գործունեութեան, վերաշինութեան հոսքերու եւ շրջանային համարկումի միջոցով:

Սակայն ահկա նաեւ վտանգ կը ներկայացնէ՝ Լիբանանը աւելի խոր կերպով ներքաշելով շրջանային աշխարհաքաղաքական մրցակցութեան մէջ, մասնաւորաբար երբ Տօցի մրցակից դերակատարները ազդեցութիւն կ'ուզեն ունենալ նահանգիստներուն, ենթակառուցումներին եւ պատերազմէն ետք Սուրիոյ վերաշինութեան վրայ: Այստեղ կրնանք հարց տալ, թէ արդեօք շրջանը ականատես կը դառնա՞ր սեւտական-թրքական դասաւորումի մը ի յայտ գալուն՝ ընդդէմ Եմիրաթակերորն առանցքի մը: Թե՛ս Սեւտական Արաբիա-Թուրքիա-Փաքիստան դաշինքը տակաւին գետնի վրայ մեծ քննութեան մը չենթարկուեցաւ, սակայն այս մերձեցումին ընդմէջէն շրջանային կապակցութեան, տնտեսական համագործակցութեան շուրջ դրական ազդանշաններ կան: Ի հակադրութիւն՝ Արաբական Միացեալ Եմիրութիւնները աւելի կեդրոնացած են ծովային ցանցերու, ռազմավարական նահանգիստներու եւ ՅՄԱԵՄ-ի հետ առնչուող ենթակառուցումներուն վրայ, որոնք կ'ամրապնդեն Տօց-Իսրայէլ-Միջերկրական կապակցութիւնը: Այս տարբերութիւնը կրնայ ձեւաւորել արեւելեան Միջերկրականի ուժերու աշխարհաքաղաքական հաւասարակշռութիւնը:

Եզրափակիչ մտածումներ

Լիբանանի խառնար շրջանային մրցակից առանցքները կրնան խորացնել ներքին քաղաքական բեւեռացումը, որովհետեւ գաղտնիք մը չէ, որ ներքին խմբաւորումները կը դատին օտար իովանաւորներու կողքին՝ շրջանային հարցերուն մէջ:

ԵՐԻԱ ԹԱՇՃԵԱՆ

Շաբ.ը՝ Էջ 6

ՃԳՆԱԺԱՄ ԱՐՏԱԴՐՈՂ ԶԱՄԱԿԱՐԳԸ



Աւելի քան երկու շաբաթ ի վեր «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրին մէջ մթնոլորտը փոթորկալից զգացումներով լեցուն է:

Պիտի չմտնեմ այս կացութեան թեքնիք մանրամասնութիւններուն մէջ. կարճ ըսած, քաղաքապետութիւնը որոշած է տեղադրել պատնէշներ, որոնք, կրթահամալիրին կարծիքով, վտանգաւոր կացութիւն կը ստեղծեն, որովհետեւ աշակերտները կը ստիպեն ոչ ամբողջովին ապահով գօտիի մէջ քալելու, եւ կրթահամալիրին ներկայացուցիչները կոչ կ'ուղղեն քաղաքապետութեան յետս կոչելու այս ծրագիրը:

Բայց անցեալ ուրբաթ օր ուշադրութիւնս գրաւեց երեւոյթ մը, երբ կրթահամալիրի հիմնադիր տնօրէնը հանրային քննարկում մը ունեցաւ համայնքի ներկայացուցիչի մը հետ, որ, եթէ ոչ **թեքնիք** մակարդակի վրայ, ապա գործնականին մէջ իշխող կուսակցութեան մաս կը սեպուի:

Այս վեճի ամբողջ ընթացքին կրթահամալիրի ներկայացուցիչները կոչ ուղղեցին անկեղծ ու կառուցողական երկխօսութեան՝ յուսալով հասնիլ համաձայնութեան մը՝ հարցը առանց բախումի լուծելու համար:

Բայց այս վեճի ընթացքին համայնքի ներկայացուցիչը վրաս ձգեց «Վերէն նայող»-ի կամ «հովանաւորող»-ի տպաւորութիւնը, որ ինծի ինչեցուց նոյն այն մարտավարութիւններն ու հնարքները, խօսելաճոճ ու արհեստական կարգապահութիւնը, որոնք կը գործադրուին արդէն 8 տարիէ ի վեր՝ Զաղաքացիական պայմանագիրի իշխանութեան գալէն ի վեր:

Նոյն լաւ մարգուած վերաբերմունքը՝ կրկնելու համար նոյն արտայայտութիւնները. «Չկայ նման բան», «Պատնէշները գեղեցիկ, սիրուն գոյներով ներկելու ենք», «Մտահոգուելու ոչինչ չկայ», «Յարգանքով ձեզ կը վճարուեցնենք», «Ձեր մտահոգութիւններն ու մտավայելութիւնները տեղին չեն», «Ես ձեզ վստահեցնում եմ»:

Բայց տպաւորութիւնս այն էր, որ այս «վստահեցումները» եւ «ինքնավճար հանդարտեցնող արտայայտութիւնները» հակառակ ազդեցութիւնը ունեցան եւ ընդունուեցան կասկածամտութեամբ ու անվստահութեամբ «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի հիմնադիր պարոն Աշոտ Բլեւանի կողմէ:

Եւ եթէ պարագան այս է, կրնա՞նք զինք մեղադրել:

Այսպէս կոչուած, «թաւշայ յեղափոխութենէն» ի վեր, երբ փայլուն խոստումներ տրուեցան գրեթէ ամէն մարզի մէջ՝ ընկերային, տնտեսական, աշխատանքի ճգնաժամին վերջ տալու, «Արցախը Զայաստան է եւ վերջ», «Յարցելու ենք», «Զայաստանը սիրոյ եւ համերաշխութեան դարաշրջան պիտի ապրի», ի՞նչ պատահեցաւ: Վըստահ եմ՝ իմաստ չունի ինչեցնել, թէ ինչպէ՞ս գրեթէ ամէն քնազաւառի մէջ ճիշդ հակառակը պատահեցաւ:

Ամէն անգամ, այսպէս կոչուած, «խաղաղութեան բանակցութիւններու» մասին խօսելու ընթացքին, ո՛վ որ քաղաքագիտութեան հիմնական դրոյթները կը հասկնայ կամ պատմութեան նուազագոյն իմացութիւնը ունի, գիտէ, թէ ինչ որ այսօր տեղի կ'ունենայ, փոխադարձ զինումներով խաղաղութեան բանակցութիւն չէ, այլ՝ ազդու պեճնակական պահանջներու անվերջանալի ցանկ մը, եւ այս ծիրին մէջ ամէն անգամ կը լսենք. «Ո՛չ, ո՛չ, ատիկա ձեր ցնորքն է, մտահոգուելիք ոչինչ կայ»:

Եւ ամէն անգամ ի վերջոյ կ'անդադառանք, որ մեր վախերը ցուօք սըղտի տեղին էին, բայց կը լսենք նոյն գաղափարը. «Ոչինչ, անցանք առաջ»:

Չեմ ուզեր դատել: Զրիստոս ըսաւ, թէ միայն երկաւոր Տերը գիտէ մտադրութիւնները. թերեւս համայնքի ներկայացուցիչը անկեղծ է:

Բայց իրողութիւնը այն է, որ Նոյնիսկ եթէ որեւէ մարզի մէջ ռեւէ ղեկավար, որ Զաղաքացիական պայմանագիր կուսակցութեան խումբին մաս կը սեպուի՝ ըլլալ քաղաքականութեան, թէ ծառայութիւններու մատուցման ոլորտներուն մէջ, դեմ յանդիման պիտի գտնուի նոյն ճգնաժամին. կայ ճրգնածամ մը, որ ամբողջ համակարգը, ոչ միայն քաղաքական մակարդակի վրայ, կորսնցուցած է կապն ու հաղորդակցութիւնը Զայաստանի քաղաքացիներուն հետ, ա՛յլ չենք խօսիր հայկական սփիւռքի մասին, եւ այս պատճառով ալ ԶՊ-ի ներկայացուցիչներուն համար շատ դժուար պիտի ըլլայ վալելու կամ ներշնչել որոշակի ապահովութիւն ու վստահութիւն, եւ ԱԶԱ ԱՅՍՏԵՂ Ե ԲՈՒՆ ՃԳՆԱԺԱՄԸ:

ՊԵՏՐՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆ
Հայրենադարձ

ՊՈԼՍՈՅ ՄԵՋ ՄԱՅԱՑԱՒ ՌԻՉԸՐՏ ԿԻՐԱԿՈՍԵԱՆԸ

Պոլսոյ մէջ 61 տարեկանին մահացաւ քաղաքական եւ ռազմական վերլուծաբան, փորձագետ, Երեւանի անկախ վերլուծական կեդրոնի տնօրէն Ռիչըրտ Կիրակոսեանը:

Ծնած է 1965-ին, Ռոտ Այլընտ նահանգի Փորովի տնէս քաղաքին մէջ: Ան իսորիորդաւ ու ու լ ու լ թ իւ լ ն տրամադրած է՝ Ասիական զարգացման դրամատան, Զայաստանի մէջ Եւրոպական Սիութեան պատիրակութեան, Ֆրանսայի պաշտպանութեան նախարարութեան, ԵԱԶԿ-ին եւ Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարարութեան: Անոր վերլուծական նիւթերը տպագրուած են հայկական եւ միջազգային մամուլին մէջ:

2006 թուականին Կիրակոսեան տեղափոխուած է Զայաստան: Վեր-



ջին տարիներուն կը ղեկավարէր Երեւանի անկախ վերլուծական կեդրոնը, որ մասնագիտացած է Զարաւային Կովկասի քաղաքական եւ ռազմավարական հարցերու ուսումնասիրութեան մէջ:

Ռ. Կիրակոսեանը նախորդ շաբաթ հանդիպման նպատակով մեկնած է Պոլիս, ուր անհանգստացած ու մահացած է սեպտեմբեր 19-ի երեկոյեան:

ՊԱՍԵՆԹՊՈԼ

ՌԻԱՏԻ ՅԱՂԹԱՆԱԿՈՎ ՍԿՍԱԻ ՌԻԱՍԼԻ «ՖԱՅՆԸԼ 8»-Ը

Շաբաթ գիշեր Լիբանանի եւ Ռասսի վերջին տարիներու ախոյեան Ռիատի 104-81 արդիւնքով պարտութեան մատնեց Յնդկաստանի Ինտիլն Ռէյլուէյգ խումբը:

Առաջին մասին ետ մնալէ ետք 1 կետով (24-25), Ռիատի լաւ ձեռով պաշտպանեց եւ բաւական կայուն ձեռով շարունակեց մրցումը:

Պէտք է ըսել, որ Ռիատի նոր օտարներով կը խաղար: Չաք Լոֆթըն, Նիքոլա (Նիք) Ուեսթ եւ Տոնավըն Ուիլիամս միացած էին խումբին վերջերս: Լոֆթըն տարիներով եղած է լիբանանեան խումբերու հետ, որոնց շարքին ՅՄԸՄ-ի հետ ալ, մինչ Սենթըր Ուեսթ եւ Ուիլիամս կարողութիւն ունին 2 տարբեր դիրքերու վրայ խաղալ:

Ուիլիամս 28 կետ եւ 12 ռիպաուստ ձեռք ձգեց, մինչ Ուեսթ իր կարգին տապալը տապալը իրագործեց՝ 21 կետով եւ 12 ռիպաուստով:

Լոֆթըն 16 կետ եւ 7 էսիսթ կատարեց: Նահիմ Ռոպայ 11 կետ նշանակեց, Ամիր Սեուր՝ 7 կետ, Պիլալ Թապպարա՝ 8 կետ, Յայկ Կեօքճեան 6 կետ, Զարիմ Չէյնուն՝ 5 կետ, իսկ Ալի Մանսուր՝ 2 կետ, 9 էսիսթի կողքին:



Յնդկական ակումբին մաս կը կազմէին Նախապէս Լիբանանի մէջ ելոյթ ունեցած Զլեանթոնի Ըրլի եւ Թիմ Տալկեր:

Նոյն խմբակին մէջ (Ա. խմբակ) Զուէյթի Զուէյթ ակումբը 105-97 արդիւնքով կրցաւ յաղթել Սեուտական Արաբիոյ Իթթիհատին: Ամորի Արչիպըլտ 34 կետ եւ 9 էսիսթ ձեռք ձգեց ի նպաստ Իթթիհատի, բայց Զուէյթի մարզիկներ Կրեյթ եւ Օնուաքու 29-ական կետեր նշանակեցին լաւ խմբային խաղով:

Այսօր ժամը 20:45-ին Ռիատի պիտի մրցի Զուէյթի դէմ:

«ԷՄ.ԷՄ.ԷՅ.»

- ՍՊԱՐՏԱԿ ՄԻՔԱՅԷԼԷԱՆԻ ԵՐՐՈՐԴ ՆԱՔ-ԱՌԻԹԸ - ՀԱՅ ՄԱՐՏԻԿՆԵՐ 11 ՅԱՂԹԱՆԱԿՆԵՐ ԱՐՉԱՆԱԳՐԵՑԻՆ



Հայ մարտիկ Սպարտակ Միքայէլեան Լաս Վեկասի մէջ տեղի ունեցած «Թաֆ Էն Աֆ 157» մրցաշարքին յաղթեց Ուիլ Կիպսընին: Մենամարտը շատ արագ էր եւ վերջ գտաւ առաջին ռաունտի 57-րդ երկվայրկեանին՝ թեքնիք նաք-աուլթով:

21 տարեկան Միքայէլեանի համար ասիկա 3-րդ յաջողական յաղթանակն է արիեստավարժ իր 3-րդ մրցումին, որ նաք-աուլթով վերջ կը գործէ: Ան նախապէս յաղթած էր Վիքթոր Ռեյլիֆին, Իթըն Սոնտերսթրոմին եւ այժմ Կիպսընին:

Մինչեւ արիեստավարժ «Էմ.Էմ.Էյ»-ին միանալը, Միքայէլեան միջազգային մրցաշարքերուն կը ներկայացներ Հայաստանը: Ան դարձած էր երկրի առաջին ներկայացուցիչը, որ միջազգային «Էմ.Էմ.Էյ»-ի ֆետերասիոնին մօտ դարձած էր աշխարհի ախոյեան: Ան նախապէս նուաճած էր Նաեի երիտասարդներու աշխարհի ախոյեան՝ Զիմոնոյի Կրեփինկի մէջ:

Երեւանի մէջ «Տաշիր Արենա»-ի սրահին մէջ տեղի ունեցաւ միջազգային մրցաշարք մը, որ կը կոչուէր «Արմաթ Էֆ. Էս.» Օրիոն Էֆ. Սի.»:

Տեղի ունեցան 12 մենամարտներ, որոնց ընթացքին Հայաստանի ներկայացուցիչներ մրցեցան Իրանի, Ղազախստանի, Ռուսիոյ եւ Ուզպէքիստանի մըրցակիցներուն դէմ:

«Անիծի սիրտ» ակումբը ներկայացնող հայ մարտիկները 11 յաղթանակներ արձանագրեցին:

Գլխաւոր մենամարտին, Սուրեն Պետրոսեան յաղթեց Տանիլ Վոլոքովին: 2-րդ ռաունտին Սուրեն Պետրոսեանի հարուածներէն ետք իրաւարարը դադրեցուց մենամարտը Վոլոքովի վիրաւոր վիճակին պատճառով:



Հայաստանի ներկայացուցիչներու միակ պարտութիւնը կրեց Դաւիթ Խաչատրեան, որ երկրորդ ռաունտին պարտուեցաւ իրանցի Մոհամետ Ռեզա Սուլէյմանիէն:

Ստորեւ արդիւնքները. Սուրեն Պետրոսեան (Հայաստան) - Տանիլ Վոլոքով (Ռուսիա) 2-րդ ռաունտ:

Սերգօ Ալեքսանեան (Հայաստան) - Ատիլբէկ Ալիբով (Ղազախստան) 12-րդ դիրքը եւ վերջին հանգրուանին պիտի մրցին Խրուաթիոյ տղոց դէմ, որոնք կը գրաւեն 9-րդ դիրքը, Հայաստանի նման 15 կետերով:

Արսէն Ալեքսանեան (Հայաստան) - Սոհամետ Ռեզա Մոհամատսի (Իրան) խեղդող հնարքով:

Նարեն Արուսիանեան (Հայաստան) - Եունես Սալարիան (Իրան) նաք-աուլթով առաջին ռաունտին:

Ռաֆիկ Աւոյեան (Հայաստան) - Արթէր Անսարի (Իրան) առաջին ռաունտին խեղդող հնարքով:

Տիգրան Նազարեան (Հայաստան) - Եսմեր Եսսիւնի (Իրան) առաջին ռաունտին խեղդող հնարքով:

Արտիմ Գալաշեան (Հայաստան) - Շահին Ֆաթիլլահի (Իրան) իրաւարարներու միաձայն որոշումով:

Լէոն Մանուէլեանց (Հայաստան) - Մեհրան Փայմարտի (Իրան) նաք-աուլթով երրորդ ռաունտին:

Արտալ Բալայեան (Հայաստան) - Մեհտի Պապախանի (Իրան) խեղդող հնարքով՝ երրորդ ռաունտին:

ՖՈՐՄԱԿԱ 1

ՌԱՍԸԼ ՇԱՀԵՑԱԻ ԱԶՐՊԷՅՃԱՆԻ ԿՐԱՆ ՓՐԻՆ

Բրիտանացի ճորճ Ռասըլ (28 տարեկան) իր «Մերսես»-ով կրցաւ մրցումին սկիզբէն աւարտ մնալ առաջին դիրքին վրայ՝ իր ետին ձգելով 4 անգամ աշխարհի ախոյեան Մաքս Վերշնթափենը եւ շահելով Ազրպէյճանի կրան փրին:

Ռասըլ 0,191 երկվայրկեանի ջնքին առաւելութեամբ յաղթեց իր առաջին կրան փրին՝ անցեալ յունիսի Աւստրիոյ կրան փրինէն ի վեր, որ իր ասպարէզի 8-րդն էր:

Ան 66 կետերու նուազեցուց իր խմբակից Զիմի Անթոնելլիի հետ կետերու տարբերութիւնը: Անթոնելլի 5-րդ դիրքը գրաւեց «Ֆեռարի»-ի Շարլ Լըքլերի ետին, 16-րդ դիրքէն սկսելէն ետք կրան փրին: 3-րդ դիրքը գրաւած էր ֆրանսացի Իզաք Յաժժար, որ իր «Ռետ Պուլ»-ը վերադարձած էր դաստակը կոտրելէ ետք: 7 անգամ աշխարհի ախոյեան Լուիս Յամիլթըն 6-րդ դիրքը գրաւեց 2-րդ «Ֆեռարի»-ով:

Պէտք է ըսել, որ 2 անգամ «Սելֆի ջար»-ը մուտք գործեց, երբ 30-րդ շրջանին Ալեքս Ալպանի Ուիլիամսը արկած մը ունեցաւ: Այս արկածը պատճառ դարձաւ, որ «Ալփին»-ի վարորդներ Ֆրանքօ Զալափինթօ եւ Փիեռ Կասիլ արկածներ ունենան՝ զարնուելով անցեալ տարուան ախոյեան Լանստօ Նորիսի («Մաքլարեն»):



Երկրորդ անգամ մրցումը ընդհատուած էր, երբ «Մաքլարեն»-ի երկրորդ վարորդը՝ Օսքար Փիասթրի չէր կրցած զսպել իր ինքնաշարժը՝ արկած մը ունենալով:

Անթոնելլի մրցումի աւարտէն 10 շրջան առաջ կըրցած էր անցնիլ Յամիլթընին՝ գրաւելով 5-րդ դիրքը:

Շաբ.ը՝ Էջ 8

ՃԱՏՐԱԿ

ՀԱՅԱՍՏԱՆ ՅԱՂԹԵՑ ԱԶՐՊԷՅՃԱՆԻՆ, ԲԱՅՑ ՊԱՐՏՈՒԵՑԱԻ ՌԻԶՊԷՔԻՍՏԱՆԷՆ

Սամարգանտի մէջ 2 արունակուեցաւ Ճատրակի համաշխարհային 46-րդ օլիմպիատան, որուն ընթացքին Հայաստանի տղոց եւ աղջկանց հաւաքականները կատարեցին երկու հանգրուաններու իրենց մրցումները:

Տղոց հաւաքականը 9-րդ հանգրուանին 2,5-1,5 արդիւնքով պարտութեան մատնեց Ազրպէյճանը:

Երեք ճակատումները հաւասարութեամբ աւարտելէ ետք, վճռորոշ եղաւ Գաբրիէլ Սարգսեանի յաղթանակը Ռաուֆ Մամետովի դէմ:

Հայկ Մարտիրոսեան, Ռոպերթ Յովհաննիսեան եւ Շանթ Սարգսեան հաւասարութիւններ արձաւանազրեցին իրենց մրցակիցներուն հետ:

10-րդ եւ նախավերջին փուլին, Հայաստանի տղաքը կրեցին իրենց առաջին պարտութիւնը ինչպէսզէն Ուզպէքիստանէն՝ 0,5-3,5 արդիւնքով:

Հայաստանի միակ կէս կետը (հաւասարութիւն) ձեռք ձգեց Շանթ Սարգսեան, որ կը մրցէր Նոտերպէք Եաքոպոյեւի դէմ:

Հայկ Մարտիրոսեան, Ռոպերթ Յովհաննիսեան եւ Գաբրիէլ Սարգսեան պարտուեցան իրենց ճակատումներուն:

Հայաստան ունի 15 կետ, իսկ պարագլուխի դիրքը գրաւող Ուզպէքիստան՝ 18 կետ: Հայաստանի տղաքը կը գրաւեն դասաւորման 12-րդ դիրքը եւ վերջին հանգրուանին պիտի մրցին Խրուաթիոյ տղոց դէմ, որոնք կը գրաւեն 9-րդ դիրքը, Հայաստանի նման 15 կետերով:

Աղջկանց խմբային մրցումներուն, Հայաստանի հաւաքականը 9-րդ հանգրուանին 3-1 արդիւնքով պարտութիւն կրեց Չինաստանէն:



Մարիամ Սկրտչեան հաւասարութիւն խլեց իրմէ բարձր դասուած Եունի Սոնկի դէմ ճակատումին, մինչ Սուսաննա Գաբոյեան իր կարգին կէս կետ խլեց Սօ Շայի դէմ ճակատումին: Պարտութիւններ կրեցին Լիլիթ Սկրտչեան եւ Էլինա Դանիելեան:

10-րդ եւ նախավերջին հանգրուանին, Հայաստան կարելոյ մրցում ունէր Յունաստանի դէմ:

Լիլիթ Սկրտչեան չկրցաւ յաղթել սեւ խաղաքարերով Յունաստանի թիւ 1 դասուած Սթաւրուլա Յոլագիտուին՝ կրելով պարտութիւն մը: (Յունաստան հաւասարութիւն խլեց, Հայաստանէն (2-2):

Մարիամ Սկրտչեան եւ Էլինա Դանիելեան յաղթանակներ արձանագրած էին իրենց յոյն մրցակիցներուն դէմ, մինչ Սուսաննա Գաբոյեան իր կարգին անակնկալ պարտութիւն կրցած էր Անթոնիա Զրիսթոուլաքիէն:

Հայաստանի աղջկանց հաւաքականը 15 կետերով կը գրաւէ 9-րդ դիրքը, մինչ Չինաստան 18 կետերով կը գրաւէ պարագլուխի դիրքը:

ԱԶԳԵՐՈՒ ԼԻԿԱ

ԿԱՐԵՒՈՐ ՅԱՂԹԱՆԱԿԷՆ ԵՏՔ ԱՅՍՕՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆ-ՄՈՆԹԵՆԵԿՐՕ

Ուրբաթ իրիկուն Հայաստանի ազգային խումբը 2-0 արդիւնքով պարտութեան մատնած էր Լաթվիան՝ «Վազգէն Սարգսեան»-ի անւան հանրապետական մարզադաշտին վրայ:

11 հազարէ աւելի համակիրներ ականատես եղած էին Հայաստանի կարելոյ յաղթանակին՝ Իրլանտայի դէմ վերջին յաղթանակէն տարի մը ետք:

Դժուար պայմաններու մէջ կը զբոսնէր Հայաստան, մանաւանդ որ 8 վիրաւորներու կողքին տակաւին մրցումի պահուն ալ վիրաւորուեցաւ Խուլիօ Պուենտե, մինչ Գեորգի Յարութիւնեան թեթեօքէն վիրաւորուելով փոխարինուած էր 82-րդ վայրկեանին:

Ազգային խումբին հետ իր առաջին ելոյթը ունեցաւ ՅՄԸՄ Պլերուքի Նախկին մարզիկներէն Արգիշտի Պետրոսեան, Էրիք Սիմոնեան իր կարգին իր ելոյթը ունեցաւ ազգային խումբին շապկով: Պէտք է ըսել, որ այժմ Հայաստանի ազգային խումբը միայն 4 կեդրոնի պաշտպաններ ունի յառաջիկայ 3 մրցումներուն համար: Գեորգի Յարութիւնեանի, Արգիշտի Պետրոսեանի եւ Էրիք Սիմոնեանի կողքին Էրիկ Փիլոյեան կը մնայ մարզիչ Եդիշէ Մելիքեանի խումբին մէջ:

Ռուսիոյ Ռոտինա խումբի յառաջապահ Ռաթուր Ղարիբեան իր կարգին առաջին մրցումը կատարեց ազգային խումբին հետ եւ նշանակեց մրցումին երկրորդ կողմ:

Գեորգի Յարութիւնեան, որ ընտըրուած էր մրցումին լաւագոյն մարզիկը, 31-րդ վայրկեանին կոլ նշանակած էր խմբապետ Էդուարդ Սպերցեանի օգտին փոխանցումներէ ետք:

Ժիրայր Շաղոյեանի փոխանցումէն օգտուեցաւ Ղարիբեան, որ դաշտ մուտք գործելէն 6 վայրկեան ետք զընդակը գետնոց Լաթվիոյ բերդին մէջ՝ ինքն իր վրայ դառնալով:

Այսօրուան մրցակից Մոնթենեկրո համեմատաբար աւելի դժուար է, բայց



այս մրցումին ալ պէտք է խմբային խաղով դրական արդիւնք ձեռք բերել: Իր առաջին մրցումին, Մոնթենեկրո 2-1 արդիւնքով պարտութեան մատնած էր Կիպրոսը:

Ա. կարգի խումբերէն Ֆրանսա պիտի մրցի Պելճիքայի մայրաքաղաք Պրիւքսելի մէջ: Ուրբաթ օր Ֆրանսա 1-0 արդիւնքով յաղթած էր Թուրքիոյ, Զոճաէիի մէջ, շնորհիւ Զիլիան Էմպպիէի կոլին: Եմպպիէ վիրաւորուած էր, եւ մօտ 10-12 օր հեռու պիտի մնայ կանաչ դաշտերէն:

Պելճիքա իր կարգին օտար դաշտին վրայ յաղթած էր Իտալիոյ՝ 2-0 արդիւնքով: Իտալիոյ ազգային խումբը պիտի մեկնի Թուրքիա՝ մրցելու համար տեղւոյն խումբին դէմ:

Շաբաթ գիշեր հետաքրքրական մրցումի մը, աշխարհի ախոյեան Սպանիա 3-2 արդիւնքով յաղթական վերադարձաւ Լոնտոնի Ռենֆալի դաշտէն:

Շաբ.ը՝ Էջ 8

